**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. օգոստոսի 29-ի N 1 ամբիոնի նիստի

2022-23 ուս. տարի

Օրակարգ՝

1.2022-23 ուս. տարվա դասախոսների բեռնվածքներ
2.Ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների քննարկում
3. Հեռակա բաժնի քննությունների անցկացում
4. Ծրագրերի և թեմատիկ պլանների քննարկում
5.ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումներ
6. Classroom համակարգ 2022-2023
7..Ընթացիք հարցեր

1. Ամբիոնի վարիչ Ն. Դալյանը տեղեկացրեց, որ ամբիոնի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ, որոշ դասախոսների բեռնվածքներում կատարվել են փոփոխություններ:
2. Անհրաժեշտ է ՕԼֆ ուսանողների ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաներ առաջարկել՝ նախապես հստակ մտածելով կատարվելիք աշխատանքի կառուցվածքը: Այդ աշխատանքների կատարման մոնիթորինգն անց է կացվելու ամիսը մեկ:
3. Սկսվել է հեռակա բաժնի լուծարքային շրջանը, հստակ ուղորդվել ժամանակացույցով
4. Վերանայել, լրամշակել առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

   ՕԼ -10 ֆակուլտետի դեկան Տ. Միքայելյանը ամբիոնին կտրամադրի ՄԿԾ-ները որոնք պետք է վերանայել և քննարկել:

5. ՕԼ -10 ֆակուլտետի դեկան Տ. Միքայելյանին կներկայացվի ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումների ցանկը:
6. Classroom համակարգ ժամանակին ներբեռնել 2022-23 ուս. տարվա առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները , հարցաշարերը:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Ջոիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. սեպտեմբերի 28-ի N 2 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. Բեռնվածքներ
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հաստատում
3. Աշխատանքը Classroom հարթակում
4. Դասախոսների հաշվետվություններ

5.Միջանկյալ ստուգումների բանավոր անցկացման հարցը:

6.Բ.գ.թ. դոցենտ Լևոն Մարկոսյանի ուսումնամեթոդական ձեռնարկների երաշխավորման հարցը:

7. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատում / մ.գ.թ.,դոցենտ Մ.Մ.Խպլիրյան

8. Այլ

1. Ամբիոնի վարիչ Ն. Դալյանից հայտնեց, որ 1 կուրսի առկա բակալավրիատում և մագիստրատուրայում որոշ խմբեր չեն ձևավորվել: Այս հանգամանքով պայմանավորված՝ որոշ դասախոսների բեռնվածքներում կատարվել են փոփոխություններ: Բեռնվածքները կրկին կենթարկվեն փոփոխության հեռակա բաժնի առաջին կուրսի ընդունելությունից հետո:
2. Հաստատվեցին ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը:
3. Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:
4. Դասախոսները հաշվետվություններ ներկայացնեն թղթային և էլեկտրոնայի տարբերակով

5. **ԼՍԵՑԻՆ՝** Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի միջանկյալ ստուգումները բանավոր ձևաչափով / թեստային աշխատանքի փոխարեն / անցկացման մասին հաստատման հարցը :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** մ.գ.դ., պրոֆ. պ/կ Ն.Դալյանը, մ.գ.թ.,դոցենտ Է. Բայաթյանը, բ.գ.թ.,դոցենտ Լ. Մարկոսյանը, մ.գ.թ.,դոցենտ Ի. Մանուկյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի միջանկյալ ստուգումները բանավոր ձևաչափով անցկացնելը:

6. **ԼՍԵՑԻՆ՝** ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լևոն Մարկոսյանի «Ռուսաց լեզվի գործնական դասընթաց (ԵԱՀԿ փաստաթղթերի հիման վրա)» / Практический курс русского языка (на материале документов ОБСЕ) / ուսումնամեթոդական ձեռնարկի երաշխավորման հարցը և «Ռուսաց լեզվի ձևաբանության հիմունքները» / Основы морфологии современного русского языка / ուսումնամեթոդական ձեռնարկի երաշխավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** մ.գ.դ., պրոֆեսոր Ն. Դալյանը, դոցենտներ Է. Բայաթյանը, Լ.Մելիքյանը, Ի. Մանուկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** միջնորդել Օտար լեզուների ֆակուլտետի խորհրդին՝ երաշխավորել ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լևոն Մարկոսյանի «Ռուսաց լեզվի ձևաբանության հիմունքները» / Основы морфологии современного русского языка ուսումնամեթոդական ձեռնարկը և Մարկոսյանի «Ռուսաց լեզվի գործնական դասընթաց (ԵԱՀԿ փաստաթղթերի հիման վրա)» / Практический курс русского языка (на материале документов ОБСЕ) / ուսումնամեթոդական ձեռնարկը:

7. **ԼՍԵՑԻՆ՝** Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարիամ Մկրտիչի Իսպիրյանի դոկտորական ատենախոսության թեմայի /«Методическая система формирования коммуникативной компетенции учащихся в условиях институционального билингвизма» /"Սովորողների հաղորդակցական կարողունակության/կոմպետենցիայի/ձևավորման մեթոդական համակարգը ինստիտուցիոնալ երկլեզվության պայմաններում˝/ հաստատման մասին հարցը :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** մ.գ.դ., պրոֆ. պ/կ Ն.Դալյանը, մ.գ.թ.,դոցենտ Է. Բայաթյանը, բ.գ.թ.,դոցենտ Լ. Մարկոսյանը, մ.գ.թ.,դոցենտ Ի. Մանուկյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարիամ Մկրտիչի Իսպիրյանի դոկտորական ատենախոսության թեման /«Методическая система формирования коммуникативной компетенции учащихся в условиях институционального билингвизма» / /"Սովորողների հաղորդակցական կարողունակության/կոմպետենցիայի/ ձևավորման մեթոդական համակարգը ինստիտուցիոնալ երկլեզվության պայմաններում՞/ և ներկայացնել Օտար լեզուների ֆակուլտետի խորհուրդ:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Զոհրաբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. հոկտեմբերի 3-ի N 3 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ

2.Աշխատանքը Classroom հարթակում

3.Մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և անցկացում

4. Այլ

1. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ:
2. Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: Ամբիոնի վարիչը հորդորեց բոլոր տեմատիկ նյութերը տեղադրել Classroom հարթակում:
3. Օտար լեզուների ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ներքոհիշյալ ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2022թ. սեպտեմբերի 16-ից մինչև

դեկտեմբերի-23-ը (շաբաթական մեկ օր) Երևանի Ե.Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոցում ։

1. Հովհաննիսյան Վիկտորյա Պատվականի
2. Ղազարյան Ստելլա Արայիկի
3. Բաբայան Սաթենիկ Բաբկենի
4. Ոսկանյան Լիլիթ Արկադիի
5. Պետրոսյան Տաթևիկ Տիրանի
6. Պողոսյան Մելինե Իվանի
7. Պողոսյան Միլենա Իվանի
8. Սողոմոնյան Կարինե Կարենի
9. Սուքիասյան Լիդա Արթուրի

Պրակտիկայի մեթոդիստ է նշանակվում Բ.Այունցը,

Հոգեբան՝ Հ.Պետրոսյան, մանկավարժ՝ Մ. Գևորգյան ։

Օտար լեզուների ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ներքոհիշյալ ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2022թ. հոկտեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 15-ը Երևանի Խ.Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում ։

1. Աhարոնյան Ասյա Հովհաննեսի
2. Ավագյան Մարջան Արայիկի
3. Գրիգորյան Աննա Հրանտի
4. Եղոյան Միլենա Հովիկի
5. Զալինյան Ալլա Սարգսի

Պրակտիկայի մեթոդիստ է նշանակվում Գ.Ս.Ստեփանյանը:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Զոհրաբյան

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. նոյեմբերի 3-ի N 4 ամբիոնի նիստի

1.Աշխատանքը Classroom հարթակում, Գ. Բալյանի հաշվետվությունը
2. Միջանկյալների անցկացում
3.ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումներ
4.Մանկավարժական պրակտիկա
5.Միջբուհական գիտաժողով /«Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ» 08.12.22
6. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված տոնակատարություը Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում

1.Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: Ամբիոնի որակի պատասղանատու Գայանե Բալյանը ներկայացրեց Google Classroom հարթակում կատարվող մշտադիտարկման արդյունքների հաշվետվությունը: Հիմնականում կատարված են բոլոր պահանջները , հորդորվեց ժամանակին և ուշադիր լրացնել էլեկտրոնային մատյանները:

2. Միջանկյալները կանցկացվեն բանավոր և վերջնարդյունքները պարտադիր կերպով մեկնաբանել ուսանողներին:

3. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ են անց կացվել դպրոցներում մանկավարժական պրակտիկայի ընթացքում

4. Օտար լեզուների ֆակուլտետի հեռակա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ

կուրսի ներքոհիշյալ ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2022թ. նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 9-ը Երևանի թիվ 76 հիմնական դպրոցում և Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում ։

1. Աբրահամյան Տիգրանուհի Տիգրանի
2. Բադալյան Սոֆյա Գագիկի
3. Գրիգորյան Մարիյա Աշոտի
4. Կյուրեղյան Սիլվա Աղասիի
5. Հարությունյան Լիլիթ Գրիգորի
6. Հարությունյան Լուսինե Գրիգորի

Պրակտիկայի մեթոդիստ է նշանակվում Լ.Գ.Բալասանյանը։

1. Հովհաննիսյան Մարգարիտա Վարդանի
2. Մարգարյան Արևիկ Մարգարի
3. Միրզոյան Արմինե Վանիկի
4. Սերոբյան Դավիթ Պայքարի
5. Օհանյան Քնարիկ Գոռի

Պրակտիկայի մեթոդիստ է նշանակվում Ռ.Ս.Հախումյանը։

5. Դալյանի հաղորդումը առ այն, որ 2022 թ. դեկտեմբերի 8-ին տեղի կունենա երկրորդ հանրապետական միջբուհական գիտաժողով «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»:

**6.** ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված տոնակատարությունը կկայանա 06.11.2022 թ. ժամը 19:00 -ին Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ։

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Զոհրաբյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի 2022 թ. դեկտեմբերի 1 -ի N 5 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1.Բեռնվածքներ

2. 2022թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվության քննարկում և հաստատում:

3.Միջբուհական գիտաժողով նվիրված ՀՊՄՀ-ի 100 ամյակին/«Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»:

4. Դասալսումներ:

5. Միջակյալների և քննությունների նախապատրաստում:

6. Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ /ՆՎԻՐՎՈՒՄ Է Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ/

7. Научно-методологический дискуссионный семинар в формате круглого стола <<Литературное медиапроектирование как новейший инструмент культурного кодирования>>. Ереван , 5 декабря 2022 г.

8. Քարոզարշավի շրջանակներում ՀՀ միջնակարգ դպրոցներ այցեր

1. Ամբիոնի դասախոսների բեռնվածքները հաստատվել են:
2. Քննարկեցին և հաստատեցին 2022թ ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

3. Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.դ. Ն.Ե. Դալյանի հաղորդումը առ այն, որ 2022 թ. դեկտեմբերի 8-ին տեղի կունենա երկրորդ հանրապետական միջբուհական գիտաժողով «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»: Նիստին քննարկվեցին տվյալ ժողովածույի հոդվածները որոնք համապատասխանում էին գիտաժողովի թեմատիկ ուղվածությանը:

4.Ամբիոնի վարիչ Ն. Դալյանը իրականացրել է դասալսումներ որից հետո տեղի են ունեցել քննարկումներ:

5. Նախապատրաստվել միջակյալներին և քննություններին, նախապատրաստել քննական տոմսերը և վերանայել հարցաշարերը:

6. Գիտաժողովի անցկացման ձևաչափը՝ առկա և առցանց:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Գիտաժողովի անցկացման օրը և վայրը՝ դեկտեմբերի 15-16-ը, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Ալեք Մանուկյան 13, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ:

Վերջնարդյունքը՝ էլ. սերտիֆիկատ:

7. 05.12.2022 թ–ին կկայանա Научно-методологический дискуссионный семинар в формате круглого стола <<Литературное медиапроектирование как новейший инструмент культурного кодирования>>

8..Ակտիվ զբաղվել ՀՄՊՀ գովազդմամբ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներով:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. դեկտեմբերի 23-ի N 6 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. Հեռակա համակարգի դասապրոցեսի մեկնարկ
2. Աշխատանքը classroom համակարգում
3. 1 –ին կիսամյակի ամփոփում
4. 30 կրեդիտի միջոցով կազմակերպվող դասընթացներ
5. Ընթացիկ հարցեր

1.Ամբիոնի վարիչ Ն.Դալյանը հայտարարեց որ սկսվում են հեռակա համակարգի դասերը:

2. Classroom համակարգում բացվել են բոլոր դասընթացների Classer-ը, տեղադրել անհրաժեշտ նյութերը, ժամանակի լրացնել էլեկտրոնային մատյանները:

3. Քննարկեցին և հաստատեցին 2022 թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությանը: Ամբիոնի վարիչ Ն.Դալյանը նշեց, որ ամբիոնի դոցենտ Լ.Կունդրատսը մշակել և քննարկման է ներկայացվել տեքստերի մշակումները:

ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողները մանկավարժական պրակտիկան անց են կացրել 2022թ. սեպտեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի-23-ը (շաբաթական մեկ օր) Երևանի Ե.Չարենցի անվան թիվ 67 և Խ.Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում : Սաթենիկ Բաբայանը և Վիկտորյա Հովհաննիսյանը անց են կացրել բաց դասեր:

ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողները մասնակցել են Հյուսիս – Կովկասյան համալսարանի կողմից կազմակերպած ստեղծագործական մրցույթին և զբաղեցրել են մրցանակայի տեղեր:

Ամբիոնում կազմակերպվել է սեմինար և կլոր սեղան Մոսկվայից ժամանած բ.գ.դ. , պրոֆ. Օ.Ուսկովայի հետ , որից հետո նա մասնակցել է ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին /15-16.12.2022թ. /:

2022 թ. դեկտեմբերի 8-ին տեղի է ունեցել երկրորդ հանրապետական միջբուհական գիտաժողով «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»:

22.12.2022 թ. առցավց տարբերակով անց է կացվել Նովգորոդի համալսարանի կողմից կազմակերպված կոնֆեռանս, որին մասնակցել են ամբիոնի դոցենտներ Լ.Մարկոսյանը և Է Բայաթյանը:

4. ՀՊՄՀ-ն «Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման» վճարովի հիմունքներով կրթական ծրագրի շրջանակներում կազմակերպում է դասընթացներ:
Դասընթացները նախատեսված են ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի (ոչ մանկավարժի) որակավորում ունեցող շրջանավարտների համար:
Օտար լեզու (ռուսերեն) մասնագիտության համար ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը առաջարկում է մ.գ.թ.,դոցենտ Էվելինա Ամատունու Բայաթյանին:
22.12.2022 –ին ամբիոնի դասախոսները պարքևատրվեցին ՀՊՄՀ 100 ամյակի կապակցությամբ:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ` Նաիրա Դալյան

Քարտուղար` Գ.Զոհրաբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2023 թ. հունվարի 27-ի N 7

Օրակարգ՝

1. 2022-23 ուտարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի վերահաստատում:

1. **ԼՍԵՑԻՆ** ՝ Ամբիոնի վարիչի հաղորդումը 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի վերահաստատման վերաբերյալ:

   **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ամբիոնի վարիչ մ.գ.դ., պրոֆեսորի պ. Նաիրա Դալյանը, Լ.Մելիքյանը, Ի.Մանուկյանը, Գ.Բալյանը , Ա.Բաղրամյանը:

   **ՈՐՈՇԵՑԻՆ –** Վերահաստատել 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթը՝ ըստ առարկաների և հաշվի առնել այն ժամանակացույցը, որը ներկայացվել է առանձին գրությամբ:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Ջոհրաբյան

27.01.2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2023 թ. փետրվարի 6-ի N 8 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

2. 2022-23 ուստարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստում:
3. Աշխատանք classroom համակարգում:.
4. Հշվետվություն / առկա և հեռակա բակալավր, առկա մագիստրատուրա/:
5. 2-րդ կիս. ամբիոնում նախատեսվող միջոցառումներ:
6. Դասալսումներ, shadowing.
7. Մեթոդական սեմինար / Феномен кросскультурной коммуникации в современном языковом образовании – Далян Н.Е./.
8. ՀՄՊՀ զովազդ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներ:

- Ս.թ. փետրվարի 9-ին մեկնարկում է երկրորդ կիսամյակը:
- Առկա ուսուցմամբ երկրորդ կիսամյակի մեկնարկին ընդառաջ՝ անհրաժեշտ է Classroom հարթակում բացված և/կամ շարունակվող դասընթացներում տեղադրել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը, դասախոսությունները և ձեռնարկները:
- Ընթացիկ կիսամյակում ամբիոնի կողմից նախատեսվում են խորհրդատվական հանդիպումներ ուսանողների հետ ավարտական աշխատանքների (առկա, հեռակա) և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ /փետրվարի 16-ին, մարտի 16 –ին, ապրիլի 18-ին/: Առկա բաժնի բակալվրիատի և մագիստրատուրայի ուսանողների կատարած աշխատանքը բավարար է: Խնդրահարույց են հետևյալ ուսանողները՝

Լալայան Վիկտորիա – ԱԲ 4 կուրս

Առուստամյան Մանե – ՀԲ 5 կուրս

- Ընթացիկ կիսամյակի վերապատրաստման ծրագրերը իրականացվելու են ամբիոնի դասախոսների կողմից.

Ս.թ. փետրվարի 14-15-ին - Դալյան Ն.Ե. , անցկացման վայրը ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

մարտի 15-17-ին - Բայաթյան Է.Ա. անցկացման վայրը ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

ապրիլի 18-19 – Մարկոսյան Լ.Ե. անցկացման վայրը ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն:

- Ընթացիկ կիսամյակում դասագրքերի, ուսումնամեթոդական նյութերի փոփոխություն չի նախատեսվում;

- Ընթացիկ կիսամյակում այլընտրանքային ձևաչափով դասերի ցանկը՝

| Դասախոս | Առարկա | Բաժին/կուրս | Թեմա | Վայր | Ժամկետ |
|---|---|---|---|---|---|
| Բաղրամյան Ա.Ի. | Օտար լեզու / ռուսաց լեզու | ՀՆԿ-9 3-րդ կ., ՊՀ-4 2 –րդ կ. | Любовная лирика Р.Рождественского | Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն | Ապրիլ |
| Գրիգորյան Մ.Ռ. | Օտար լեզու / ռուսաց լեզու | ԳԿ-5 2-րդ կ., Կ-7 2-րդ կ. | Внеклассный урок “Памятники Еревана: студенты-гиды” | Ազատության հրապարակ | Մարտ |
| Կունդրատս Լ.Ա. | Օտար լեզու / ռուսաց լեզու | ԳԿ-5 ԱՄ-1-ին կ., ԲՍ-1 ԱՄ-1-ին կ. | Миссия: учить-научить-воспитать | ՀՊՄՀ թանգարան | Մարտ |

- Ընթացիկ կիսամյակում նախատեսված ուսանողների հետ միջոցառումների ցանկը՝

| Դասախոս | Բաժին/կուրս | Թեմա | Ժամկետ |
|---|---|---|---|
| Բալյան Գ.Ա., Այվազյան Ն.Ս. | Օտար լեզու / ռուսաց լեզու տարբեր ֆ-ի ուսանողներ | “Надежды маленький оркестрик под управлением любви ” | Ապրիլ |
| Մանուկյան Ի.Յու. | ՕԼՖ-10 | Բաց դաս՝ «День словянской письменности »: | Մայիս |

- Ընթացիկ կիսամյակում նախատեսում ենք համագործակցել շեղուինգ իրականացնող ուսանողի հետ:

  ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն բաժնի 3 –րդ կուրսի ուսանող ՝ Հովհաննիսյան Վիկտորիա, 4-րդ կուրսի ուսանողներ՝ Գրիգորյան Աննա, Սերգեևա Սարա: Նախատեսվում է մասնակցություններ դասալսումներին, քննարկումներ և հաշվետվություն ամբիոնի նիստերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Մ. Մարկոսյանը, դոցենտ, մ.գ.թ. Ի. Մանուկյանը, դոցենտ, մ.գ.թ.,դոցենտ Լ.Մելիքյանը: Վերջիններն ամփոփ ներկայացրեցին քննաշրջանի արդյունքները: Հիմնականում, քննաշրջանը նորմալ էր ընթացել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Ընդհանուր առմամբ, դրական գնահատել առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները

2. Classroom հարթակում տեղադրել առկա բաժնի երկրորդ կիսամյակի համար անհրաժեշտ նյութերը:
3. Ակտիվ զբաղվել ՀՄՊՀ գովազդմամբ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներով:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Ջոհրաբյան

06.02.2023

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2023 թ. մարտի 2-ի N 9 ամբիոնի նիստի

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Ավարտական, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի մոնիթորինգի արդյունքների ամփոփում
2. Միջանկյալ ստուգման նախապատրաստական աշխատանքները
3. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում
4. Աշխատանք Classroom համակարգում
5. Դասալսումներ / շեղոուինգ /
6. Այլընտրանքային դասեր , միջոցառումներ
7.Պրակտիկա
8. ՀՊՄՀ-ում կանցկացվի 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման դասընթացների 2-րդ փուլը
9. Մեթոդական սեմինար
10. Հեռակա 5-րդ և հեռակա մագիստրատուրա 1-ին կուրսի դասապրոցեսը:

**ԼՍԵՑԻՆ** Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին ով, հայտնեց, որ՝

ա/ Անցկացվեց ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգին: Հաջորդ մոնիթորինգը կկայանա ս.թ. մարտի 21-22-ին եթե ուսանողը չի անցնում երկու մոնիթորինգ ,չի թույլատրվում մասնակցել պաշտպանության:

բ/ Միջանկյալ ստուգումները նախատեսված է անցկացնել ապրիլի 6-ից ապրիլի 12-ն ընկած ժամանակահատվածում, ուստի պետք է նախապատրաստվել:

գ/ Մանկավարժական պրակտիկա՝

մարտ-ապրիլ – ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրս և մագիստրատուրա 1-ին կուրս, հեռակա բաժնի պրակտիկան շարունակվում է:

դ/ Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: Կատարված մոնիթորինգի արդյունքում դեռևս բացահայտվել են որոշակի թերություններ, որոնք շտկվել են: Որակի պատասխանատու Գայանե Բալյանը կատարված մոնիթորինգի արդյունքների հիման վրա կազմել է հաշվետվությունը:

ե/ Ամբիոնի վարիչ Ն. Դալյանը ՕԼ ֆակուլտետի ուսանողի հետ իրականացրել է դասալսումներ / շեդոուինգ /համալսարանի բոլոր ֆակուլտետներում և ներկայացրեց որոշ դիտարկումներ՝

Լ. Կունդրատսի դասը ընթացել է թեմային համապատասխան, հանդարտ և հետաքրքիր, Զ. Մելկիկյանի և Գ.Ճանճապանյանի դասի ժամանակ ուսանողները ակտիվ մասնակցում էին թեմայի քննարկմանը, Լ.Մելիքյանի դասը շատ հետաքրքիր էր: Ն.Դալյանը դասախոսներին հորդորեց օգտվել Լ.Կունդրատսի կողմից մշակված թեմաներից :

զ/ Այլընտրանքային դասեր՝

- Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողները դասախոս Լ.Կունդրատսի հետ <<Օտար լեզու /ռուսաց լեզու/>> առարկայի այլընտրանքային դասը անցկացրել են Ժամանակակից արվեստի թանգարանում
- Գեղարվեստական կրթության և բանասիրական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողները դասախոսներ Գ. Բալյանի և Ն.Այվազյանի հետ <<Օտար լեզու /ռուսաց լեզու/>> առարկայի այլընտրանքային դասը անցկացրել են Ժամանակակից արվեստի թանգարանում:

է/ Պրակտիկա

Մարտ-ապրիլ ամիսներին պրակտիկա կանցնեն առկա բակալավր 3-րդ կուրսի ուսանողները և ՕԼՖ-10 մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողները: Հեռակա բաժնի պրակտիկան շարունակվում են :

ը/ Մեկնարկել է մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման համար դասընթացների 2-րդ փուլը: Օտար լեզու (ռուսերեն) մասնագիտության համար ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը առաջարկում է մ.գ.թ.,դոցենտ Էվելինա Ամատունու Բայաթյանին:

թ/ Մեթոդական սեմինարը անցկացրեց ամբիոնի դոցենտ Լ.Մարկոսյանը «Лингвокультурологический портрет концепта Судьба в русском и армянском языках»:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** ՝ Ամբիոնի վարիչ մ.գ.դ., պրոֆեսորի պ. Նաիրա Դալյանը, Լ.Մելիքյանը, Ի.Մանուկյանը, Գ.Բալյանը , Է.Բայաթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Անցկացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական աշխատանքների մոնիթորինգ մարտի 21-22-ին ՝ անպայմանորեն հաշվետվությունների ներկայացմամբ, որոնք նախապես պետք է արժանանան գիտական ղեկավարների հավանությանը:
2. Classroom հարթակում աշխատել ըստ դասացուցակի, իսկ տեխնիկական խնդիրների դեպքում դասացուցակում տեղ գտած փոփոխությունների մասին պատշաճ կերպով տեղեկացնել ինչպես ուսանողներին, այնպես էլ ամբիոնի ղեկավարությանը, :

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Ջոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2023 թ. ապրիլի 4-ի N 10 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Միջանկյալ ստուգման նախապատրաստական աշխատանքները
2. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն
3. Մանկավարժական պրակտիկա
4. Դասախոսների թղթապանակ
5. Աշխատանքը classroom համակարգում / մշտադիտարկում
6. Այլընտրանքային դսաեր
7. / Ռուսաց լեզվի պրակտիկում առարկայից 60 ժամ տրամադրել Մասնագիտության ներածություն առարկային /
8. Գիտա-մեթոդական սեմինար /Է.Բայաթյան /

ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին ով, հայտնեց, որ՝

ա/ 06.04.2023 մեկնարկում են միջանկյալ ստուգումներիը: Ամբիոնի որոշմամբ միջանկյալները անց են կացվում բանավոր:

բ/ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը տեղի կունենա 12.04.2023 թ-ին: Նշվեց, որ տիտղոսաթերթերը լինեն երկլեզու /հայերեն և ռուսերեն /:

գ/ ՕԼՖ-10 հեռակա համակարգի ուսանողները ավարտեցին մանկավարժական պրակտիկան:

Բակալավր 2-րդ կուրսի ուսանողների պրակտիկան ավարտվում է 19.04.2023 թ-ին , 3-րդ կուրսը- 03.04.2023 թ-ին:

Քննարկման ընթացքում դսախոսները /Ն.Դալյանը, Է.Բայաթյանը, Բ.Այունցը, Գ.Բալյանը, Գ.Ստեփանյանը /որոշեցին ստեղծել ընթանրական դասի սխեմա, որը կտրամադրվի ուսանողներին:

ե/  Դասախոսներին առաջարկվեց վերանայել և թարմացնել թղթապանակները:

զ/ Կրթության էլեկտրոնային կառավարման բաժինը սույն թվականի մարտի 10-ից մինչև մարտի 29-ը ներառյալ, իրականացրել է Classroom հարթակի դասընթացների մշտադիտարկում /*առկա ուսուցման համակարգի բակալավրիատ և մագիստրատուրա կրթական ծրագրերի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ*:

Ներկայացվեցին [մշտադիտարկման արդյունքերը](), այն դասախոսներին, ովքեր ներառված են ցանկում և ունեն բացթողումներ անհրաժեշտ է լրացնել ***մինչև սույն թվականի ապրիլի 7-ը ներառյալ***, որից հետո կրկին իրականացվելու է մշտադիտարկում:  Ամբիոնը չունի թերացում, ժամանակին լրացվում են էլ. մատյանները, առկա են պահանջվող բոլոր նյութերը:

է/  Ամբիոնի վարիչը  շնորհակալություն հայտնեց բոլոր դասախոսներին հետաքրքիր անցկացրած այլընտրանքային դսաերի համար / Բ.Այունցին , Գ.Ստեփանյանին, Զ. Մելկիկյանին, Ա.Բաղրամյանին, Մ.Գրիգորյանին, Ի.Մանուկյանին, Ն.Այվազյանին, Գ.Բալյանին,Լ.Կունդրատսին/:

ը/  Մեթոդական սեմինարը անցկացրեց ամբիոնի դոցենտ Է.Բայաթյանը «Инновации в методике преподавания РКИ»:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ `**    Ամբիոնի վարիչ մ.գ.դ., պրոֆեսորի պ. Նաիրա Դալյանը, Ի.Մանուկյանը, Գ.Բալյանը , Է.Բայաթյանը, Լ.Մարկոսյանը, Ա.Բաղրամյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**      Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը տեղի կուննեա 12.04.2023 թ-ին:

Նախապատրաստվել միջանկյալ ստուգմանը՝ անցկացնելու այն հիմնականում բանավոր:

**7.ԼՍԵՑԻՆ՝**       Ամբիոնի վարիչ մ.գ.դ. պրոֆ.պ/կ  Ն. Դալյանի հաղորդումն օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսի 2-րդ

կիսամյակի «Ռուսաց լեզվի պրակտիկում» առարկայի 60 ժամը «Մասնագիտության ներածություն» առարկային հատկացնելու մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** մ.գ.դ., պրոֆ. պ/կ Ն.Դալյանը, մ.գ.թ.,դոցենտ Է. Բայաթյանը , բ.գ.թ., դոցենտ Լ Մարկոսյանը, Գ.Բալյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** «Ռուսաց լեզվի պրակտիկում» առարկայի 60 ժամը հատկացնել «Մասնագիտության ներածություն» առարկային :

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2023 թ. մայիսի 8-ի N 11 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. Մագիստրոսական և ավարտական աշխատանքների պաշտպանություն

2. Հեռակա ուսուցման 2 –րդ կիսամյակի նախապատրաստություն

3.Աշխատանքը classroom համակարգում:
4. Մանկավ. պրակտիկայի ամփոփում :

5. «Միջնակարգ կրթության կրեդիտների չափումն ու հաշվառումը» ծրագրով առաջարկներ

6. «Ռուսաց լեզվի պրակտիկում» առարկայի 60 ժամը «Մասնագիտության ներածություն» առարկային հատկացնելու մասին հարցը

7. Մեթոդական սեմինար:

1. Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ անց է կացվել ՕԼՖ մագիստրատուրայի 2-րդ կուրսի, բակալավրիատի առկա ուսուցման բաժնի 4-րդ կուրսի և հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանություն, որի արդյունքներն արձանագրվել են: Ն. Դալյանը կարևորեց հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնելու կարևորությունը, մանկավարժական պրակտիկայի դերն ու նշանակությունը ապագա մանկավարժների պատրաստման հարցում՝ շեշտելով, որ այդ հարցերին անհրաժեշտ է մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ և իրականացնել:

2. Մեկնարկում է հեռակա ուսուցման 2 –րդ կիսամյակը և առկա բակալավր 2-րդ կուրսի , մագիստրատուրա 1-ին կուրսի ամփոփիչ ստուգումները:

3. Անց է կացվել classroom հարթակի մշտադիտարկում : Բոլոր նյութերը տեղադրված են , մատյանները լրացված:

Առարկայական նկարագրերը վերանայվել են և կատարվել են լրամշակումներ

/ ԿՀՍ-6, ԳԿ-5, ՀՆԿ-9/:

4. Ավարտվել է ՕԼՖ-10 ուսանողների մանկավարժական պրակտիկան դպրոցներում: Դպրոցներու գոհ են մնացել մեր ուսանողներից:

**5. ԼՍԵՑԻՆ՝** «Միջնակարգ կրթության կրեդիտների չափումն ու հաշվառումը» ծրագրով առաջարկների մասին հաստատման հարցը :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** մ.գ.դ., պրոֆ. պ/կ Ն.Դալյանը, մ.գ.թ.,դոցենտ Է. Բայաթյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից ներկայացված «Միջնակարգ կրթության կրեդիտների չափումն ու հաշվառումը» ծրագրով առաջարկները:

6. **ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչ մ.գ.դ. պրոֆ.պ/կ Ն. Դալյանի հաղորդումն օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի «Ռուսաց լեզվի պրակտիկում» առարկայի 60 ժամը «Մասնագիտության ներածություն» առարկային հատկացնելու մասին :
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** մ.գ.դ., պրոֆ. պ/կ Ն.Դալյանը, մ.գ.թ.,դոցենտ Է. Բայաթյանը , բ.գ.թ., դոցենտ Լ Մարկոսյանը, Գ.Բալյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** «Ռուսաց լեզվի պրակտիկում» առարկայի 60 ժամը հատկացնել «Մասնագիտության ներածություն» առարկային :

7. Մեթոդական սեմինարը անց կացրեց ամբիոնի դոցենտ Է.Բայաթյանը:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Զոհրաբյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2023 թ. հունիսի 29-ի N 12 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

2022-2023 ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում:

Ամբիոնի վարիչ Ն. Դալյանը նշեց, որ
ա/ ընդհանուր առմամբ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական քննությունններն ընթացել են առանց որևէ խնդիրների, դրանք տեխնիկապես կազմակերպվել են բարձր մակարդակով, չի եղել անբավարար գնահատական, չի եղել որևէ բողոքարկում:
բ/ Ամբիոնում անց են կացվել կոնֆերանսներ, մեթոդական սեմինարներ որոնց ընթացքում ներկայացվում է գիտամեթոդական գրականության ամփոփում, ինչպես նաև նոր մեթոդաբանական տեխնոլոգիաներն ու մոտեցումները: Ձևավորվել է Classroom-ում աշխատանքը համակարգող խումբ /Ն.Ե.Դալյան, Գ. Ա. Բալյան/, Մոսկվայի տուն, մշակութային գործարար կենտրոնում անց են կացվել որակի բարձրացման դասընթացներ, ամբիոնի դասախոսները պարբերաբար անց են կացրել այլընտրանքային դասեր: Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը սերտորեն համագործակցում է Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն «ԴՈՄ ՄՈՍԿՎԻ», Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի, Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտոտի, Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի,Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի լեզվաբանության ինստիտուտի հետ՝ ՀՊՄՀ և նշյալ բուհերի միջև կնքված պայմանագրերի համաձայն:
Erazmus+ ծրագրով ամբիոնի վարիչ Ն Դալյանը 2023 թ. ապրիլի 14-23-ը գործուղվել է Սլովակիա, Ռոժոմբերոկի կաթոլիկ համալսարան ՝ դասախոսություններ իրականացնելու նպատակով:

Erazmus+ARMDOCT ծրագրով ամբիոնի դոցենտ Մ.Խպլիրյանը 2023 թ. 24-28-ը գործուղվել է Ֆրանսիա, Լիոն Ժան Մուլեն 3 համալսարան:

Օտար լեզուների ֆակուլտետի 2-3-րդ կուրսի ուսանողներ Աննա Գևորգյանին, Լիլիթ Մարտիրոսյանին, Վիկտորյա Հովհաննիսյանին ու Սաթենիկ Բաբայանին: հաղթող էին ճանաչվել ռուսաց լեզուն և գրականությունը հանրահռչակելու նպատակով Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի կազմակերպած «Գրականագիտական թելադրություն» միջազգային մրցույթում:

Տեղի ունեցավ ՀՊՄՀ Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված «Հույսի փոքրիկ նվագախումբ» խորագրով գրական-երաժշտական ուսանողական ցերեկույթը / մոդերատոր Գ.Բալյան/:
Ցերեկույթի անվանումը պատահական չէ ընտրված. անվանի երգահան, գրող Բուլատ Օկուջավայի համանուն երգն է ոգեշնչել բուհի 10 ֆակուլտետների ապագա

մանկավարժներին՝ ստեղծելու տարբեր ձայներից, մտքերից, զգացմունքներից, բարի ու անկեղծ խոսքից բաղկացած փոքրիկ, բայց հույսով լի նվագախումբ՝ հանուն հավատի և սիրո հաղթանակի: Միջոցառմանը ներկա էին բուհի Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը, դասախոսներ, ուսանողներ:

Հայկական պետական մանկավարժական համալսարանն ընդլայնում է համագործակցության շրջանակը՝ ընդգրկելով կրթական նոր կազմակերպություններ:

Ամերիկյան SRAS կրթական կազմակերպության հետ համատեղ մայիսի 29-ից օգոստոսի 4-ը ԱՄՆ տարբեր համալսարանների 21 ուսանող կուսանի Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի բաժնում:
Ուսումնառության ընթացքում, ռուսաց լեզվից բացի, ամերիկացի ուսանողները կծանոթանան նաև հայոց լեզվին, պատմությանը, ամենշաբաթյա հանդիպումներ կունենան ՀՊՄՀ ռուսաց լեզվի բաժնի ուսանողների հետ՝ ռուսերենը բարելավելու նպատակով: Ռուսաց լեզվի դասընթաց SRAS ծրագրի սահմաններում ԱՄՆ-ից ժամանող ուսանողների հետ անց են կացնելու ամբիոնի դասախոսներ Ն.Դալյանը, Գ. Բալյանը, Նունե Այվազյանը :

Ամբիոնի դոցենտ Լ.Կնդրատսը ամբիոնի դատի հանձնեց իր կողմից կատարած տեքստի մշակումների տպագիր օրնակները:

28.06.2023 թ. տեղի ունեցավ հանդիպում ՀՊՄՀ ռեկտորի հետ, որի ժամանակ պարզ դարձավ ,որ ունենք ժամերի նվազում կան մասնագիտություններ որտեղ դիմորդներ չեն եղել, մեր ամբիոնը ունի 3800ժ. նվազում: Դասացուցակը պատրաստ է բոլոր ֆակուլտետները կլինեն 1-ին հերթով:

**ԼՍԵՑԻՆ**՝ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի բ.գ.թ. , դոցենտ Լևոն Մարկոսյանի ներկայացրած կարծիքը Կորյուն Օհանյանի կազմած « Ֆիտոնիմների բառարան »-ի վերաբերյալ «Լավագույն գիտական աշխատանք » մրցույթ 2023 –ին մասնակցեկու համար :
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ն. Դալյանը, դոցենտներ Է. Բայաթյանը, Լ.Մելիքյանը,

Ի. Մանուկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ**՝ միջնորդել ՀՊՄՀ գիտական խորհրդին՝ երաշխավորել Կորյուն Օհանյանի կազմած « Ֆիտոնիմների բառարան » աշխատանքը «Լավագույն գիտական աշխատանք » մրցույթ 2023 –ին մասնակցեկու համար :

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ՝ Նաիրա Դալյան

Քարտուղար՝ Գ.Զոհրաբյան